ղեն, որ Գ անգամ ետուն արզուհալ և չդադարէին։ Առաջին կալանաւորքն ԺԱ. հոռոմ և Դ հայ, սակայն զնոցա ձայնն ոչ ոք լուաւ, ոչ ի դրունս ումեք զնացին և ոչ յերեսս այլոց ելին, այլ բիրտ և անհաւան ազգն մեր արզուհալ արզուհալի վերայ։ Նոքա որ մոռանային, սոքա յիշեցուցանէին թէ կալանաւորքս չեն վնասապարտ՝ այլ այլք են չինողք։ Եւ նա լուեալ առաւել կատաղէր ի դէմս մեր, որպէս երբեմն առ հարբ նորա վասն սպանման Թումային արարին։ Վասն որոյ և Հայք շատք եղեն ի գուբն. նոցա եկեղեցին ԺԹ էր և մերն Բ. նոցանէ Ծ–ական զուռուշ մարդագլուխ ապա գնաց, և Դ ոգին ի Հայոց ՃՌ ըստակ խարճեցին՝ անհամբեր լինելով ի ձեռս սուպաշուն, և նա ևս ծածկաբար, և ևս զչարչարանս մերոյն տուրկէրի ետուն։ Յետ երկուց աւուրց ելանելոյ նոցին՝ առաքէ զեէնկիչէր աղասին զօլով ի Ղալաթայ, որոց զօրք կալեալ զամենայն զայեխս և զփէրէմէս և լցեալք ի սանտալս՝ անցանեն յայն կոյս և քակեն զՄնացեալ եկեղեցիսն ի հիմանց, եւ մինն մեծագոյն գոլով Ֆռանկաց[1]), եւ բազում սպասուք աւար հարկանեն անասելի. և մինն այրեալ ի Թվին (դաբաղ), զայն դրէմ դրէմ քակեալ, որ յոյժ ամրագոյն չէնս լինելով զարմացուցանէ զտեսողս և գեղանկար և ոսկէզօծ պատկերքն լան իբրև յերեսս մարդկան և գեղեցիկ զանկակատունն բարձրագոյն սրբատաշ վիմօք, քայքայեալ զայս ամենայն չինուածս ամուրս, և տունս ի վերայ և խանութս ի ներքոյ փայտեայ չինեն, որոց դատաստանն մի արդարասցի։ Ահա՛ այս ամենայն լինէր վասն անօրէնութեանց մերոց մեղանաց։ Եւ Բ եկեղեցի ի ղալէմ թէֆթիչին ոչ եկն զի տօշէմէ խսիր չունէր և ոչ խորանս և ոչ այլ ինչ, և ի մէջն կայր յարդ և ոմանք քացախոյ և այլ ինչ, վասն որոյ և մնայր։

1) ֆռ.